Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

2013 հուլիս

www.WomenNet.am

«Կանայք ունեն իրենց ներուժն իրացնելու հնարավորությունները, ուղղակի նրանց համարձակությունն է պակասում»

էջ 4

Յուրաքանչյուր կին, լինի հասուն թե երիտասարդ, իր ակտիվ գործունեությամբ փոքրիկ հեղափոխություն է իրականացնում իր շրջապատում և իրականության մեջ առհասարակ:

Եվա Թովմասյան,
լրագրող, ՀԱԿ-ի անդամ

Ես այստեղ եմ, որովհետև երբեք չեմ կարողանա համակերպվել բռնության և անարդարության հետ:

Աննա Նիկողոսյան,
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ, ծրագրերի տնօրեն

Կարծում եմ՝ աղջիկը կարող է անել ամեն ինչ: Նա պարզապես պետք է հավատա ինքն իրեն:

Էլվիրա Մելիքսեթյան,
Կանանց ռեսուրսային կենտրոն, «Աղջիկները խոսում են» ծրագրի ղեկավար

Անկախության հասակակիցները...

Ասում են՝ քաղաքականության մեջ կանանց ու տղամարդկանց հավասար ներկայացվածության կհասնենք միայն այն դեպքում, եթե ունենանք շատ ուժեղ, բանիմաց, խելացի ու պայքարող, բայց միևնույն ժամանակ և շատ կանացի ու հմայիչ կանայք... Թույլ տվեք չհամաձայնել. մենք այսօր էլ ունենք այդպիսի կանայք՝ կրթված, համարձակ, արդարամիտ, ակտիվ ու գործունյա և դրանով իսկ շատ հմայիչ... Գուցե դեռ երիտասարդ են, ընդամենը 22 տարեկան, որոշումների մակարդակում ներկայացված լինելու համար, բայց նրանք իրենց որոշումը կյանքում արդեն կայացրել են՝ ձերբազատվել անտարբերությունից, օգնել մարդկանց, լինել այն կանանց կողքին, ովքեր հայտնվել են անելանելի իրավիճակներում, համոզել իրենց նման աղջիկներին հավատալ իրենց ուժերին, դարձնել մեր հասարակությունը ավելի բարի, հանդուրժող ու արդար... Կասեք՝ անիրագործելի առաքելություն է այս տարիքում, և նորից կսխալվեք՝ նրանք արդեն համարձակություն են ունեցել անել այս ամենը, ընդ որում մեծ հաջողությամբ՝ համախմբելով իրենց շուրջը շատ ու շատ երիտասարդ աղջիկների ու տղաների և օրինակ ծառայելով նրանց:

Էլվիրան ու Աննան իրավապաշտպան են, ակտիվ հասարակական գործունեություն են ծավալում կանանց իրավունքների պաշտպանության ասպարեզում, Եվան լրագրող է ու կուսակցական ակտիվիստ, առաջին քայլերն է անում քաղաքականության մեջ՝ այս տարի առաջադրվել էր Երևանի ավագանու ընտրություններին ՀԱԿ-ի ցուցակով...Հաջողություններ մաղթենք նրանց, քանզի քաղաքական սերնդափոխություն ասվածը հենց նրանք են իրագործելու՝ փոփոխություններ բերելով մեր կյանքում և կանխորոշելով մեր ավելի լավ ապագան...

Դե յուրե - դե ֆակտո

Օրենքն արդեն ուժի մեջ է, մնում է այն կյանքի կոչել

ՀՀ նախագահն արդեն ստորագրել է Ազգային ժողովի ընդունած «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, և այն ուժի մեջ է մտել: Խնդիրն այժմ այդ օրենքը կյանքի կոչելն է: Մենք փորձեցինք ճշտել երիտասարդ տղամարդկանց կարծիքը այդ խնդրի շուրջ՝ նրանց հարց ուղղելով, թե արդյոք մեր հասարակությունում կանայք ու տղամարդիկ կարո՞ղ են դե ֆակտո հավասար հնարավորություններ ունենալ: Կարծիքները բազմազան էին, ներկայացնում ենք դրանք առանց միջամտության:

Օգսեն Թարվերդյան, 25 տ. «Հավասար հնարավորությունների ապահովման հարցում լավատեսորեն եմ տրամադրված: Ինքս աշխատել եմ մի միջավայրում, որտեղ թե՛ կնոջ, թե՛ տղամարդու կարծիքը հավասարազոր է եղել, այնտեղ գաղափարների մրցում կար, ոչ թե սեռերի: Սակայն մեր ծնողների սերունդը բոլորովին այլ արժեհամակարգով է ապրել, որի մի զգալի մասը փոխանցվել է նաև մեզ, այնպես որ, մեզ էլ է ժամանակ պետք, որ մեր միջից վերացնենք այդ կարծրատիպը, թե տղամարդն ավելի բարձր է, քան կինը»:

Արման Աբգարյան, 20 տ. «Կինն ու տղամարդը չեն կարող հավասար լինել, թեև հիմա կանանց իրավունքներն ավելի լավ են պաշտպանվում, քան մերը: Ես չեմ կարող ամբողջ հասարակության անունից խոսել, բայց անձամբ ես դեմ կլինեմ, որ իմ կինն աշխատի, որովհետև ուզում եմ, որ իմ երեխաները մայրական խնամքից զուրկ չլինեն, ուզում եմ, որ կինս տանը լինի և տնային գործերն անի: Ես այնքան կաշխատեմ, որ նա ոչ մի բանի կարիք չզգա: Երբ երեխաները մեծանան, դառնան դպրոցական, այդ ժամանակ չեմ արգելի, որ կինս աշխատի»:

Էդուարդ Անդրեասյան, 19 տ. «Այսօրվա Հայաստանում պրակտիկորեն անհնար է, որ կինը հավասար հնարավորություններ ունենա տղամարդկանց հետ, և դա պայմանավորված է ոչ թե նրանով, որ կինը բավարար խելացի կամ պատրաստված չէ, այլ զուտ մեր մենթալիտետով, որը փոխելը շատ դժվար է: Ես սովորում եմ իրավաբանական ֆակուլտետում և կարող եմ ասել, որ մեր ոլորտում էլ կա գենդերային խտրականություն: Օրինակ՝ աղջկա համար բավականին բարդ է աշխատանքի անցնել ուժային կառույցներում, այնտեղ կինը որևէ բաժնի կամ վարչության պետ չի դառնա, որքան էլ խելացի ու գրագետ լինի»:

Նարեկ Բարսեղյան, 19 տ. «Մեր հասարակությունում կա անհավասարություն, բայց դա կամաց-կամաց փոխվում է: Ես Արթիկից եմ, մեր քաղաքում ընկերոջս մայրն առաջադրվեց որպես քաղաքապետի թեկնածու, և դա նորմալ ընդունվեց: Նա երկրորդ տեղը զբաղեցրեց՝ զիջելով միայն իշխող կուսակցության թեկնածուին»:

Ռուբեն Մուրադյան, 23 տ. «Մենք ավանդապաշտ ժողովուրդ ենք, մեզ մոտ հայրիշխանական համակարգ է, հայրիշխանությունը հայ ընտանիքի ամրության երաշխիքն է: Ես կողմ եմ հայրիշխանությանը, բայց ոչ բռնատիրությանը, պարզապես ճիշտ է, որ ցանկացած հարցի վերջնական լուծումը տղամարդն է տալիս: Սակայն պետք է խոստովանել, որ մեր հասարակությունը շատ արագ փոփոխությունների է ենթարկվում, և մեր հաջորդ սերունդը, կարծում եմ, կտեսնի գենդերային հավասարություն մեր երկրում»:

Գուրգեն Պետրոսյան, 25 տ. «Մեզ ոչ թե օրենք ընդունել կամ փոփոխել է պետք, այլ մարդկանց գիտակցությունը փոխել, այլապես ոչ մի օրենք էլ չի գործի: Ես կողմ եմ հավասարությանը, իմ սիրած աղջկան ասել եմ, որ ուզում եմ, որ նա աշխատի ու ոչ թե փող վաստակելու համար, այլ որպեսզի չձանձրանա, իր կոլեկտիվն ունենա, իր աշխատանքային միջավայրը, ցրվի տնային գործերից: Իմ կարծիքով՝ հայ տղամարդիկ ճնշում են կանանց, որովհետև չեն վստահում, վախենում են, որ կնոջն ազատություն տալով՝ կկորցնեն նրան: Ինքնավստահ տղամարդը երբեք չի ճնշի, առավել ևս՝ բռնության չի ենթարկի կնոջը»:

Էդուարդ Ղազարյան, 20 տ. «Շատ ուրախ եմ, որ մեր երկիրը նման օրենք ունի, դա մեր միջից խտրականությունը վերացնելու առաջին քայլերից է: Ցավոք, այսօրվա իրականությունում անհնար է նման օրենքի լիարժեք կիրառումը, որովհետև ժամանակ է պետք, կանանց գիտակցությունն էլ պետք է փոխվի, որպեսզի իրենք պայքարեն իրենց իրավունքների համար»:

Փաստաշար

Մալալայի օրը ՄԱԿ-ում

Որպես աղջիկների կրթության իրավունքի պաշտպան հայտնի դարձած պակիստանցի դպրոցական Մալալա Յուսուֆզայը, ով անցյալ տարի հարձակման էր ենթարկվել թալիբների կողմից, իր 16-ամյակի օրը ելույթ ունեցավ ՄԱԿ-ում:

Ծանր վնասվածքներ ստացած աղջիկը միայն հրաշքով ողջ մնաց և շարունակում է իր պայքարը աղջիկների կրթության համար: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն առաջարկեց հուլիսի 12-ը՝ նրա ծննդյան օրը, հռչակել Մալալայի օր: Ոչ մի երեխա չպետք է մահանա այն պատճառով, որ ուզում է սովորել, ընդգծեց նա:

«Մալալայի օրն իմ օրը չէ, այլ իրենց իրավունքների համար պայքարող յուրաքանչյուր կնոջ և աղջկա օրն է»,- հայտարարել է Մալալա Յուսուֆզայը՝ հանդես գալով ՄԱԿ-ում:

Երիտասարդ կանայք ընտրական ցուցակներում

Ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունների ցուցակներում ներկայացված կին թեկնածուներից մինչև 30 տարեկան կանայք ընդամենը 9% էին կազմում, իսկ 30-40 տարեկանները՝ 20%:

Երևանի ավագանու ընտրություններում կին թեկնածուների թվում մինչև 35 տարեկանները միջինը 38% են կազմել, ընդ որում՝ «Բարգավաճ Հայաստանի» ցուցակում երիտասարդ կանայք 50% էին, իսկ ՀԱԿ-ի, «Առաքելության» ցուցակներում ընդգրկված կանայք գրեթե բոլորը մինչև 35 տարեկան էին:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ավագանու անդամ առաջադրված կին թեկնածուների թվում 30%-ը երիտասարդ կանայք էին:

Կանանց նկատմամբ բռնությունը վերածվել է գլոբալ համաճարակի

Այսօր աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին ենթարկվում է բռնության որևէ տեսակի: Այս մասին խոսվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության նոր ուսումնասիրության մեջ: Նրա հեղինակները պնդում են, որ կանանց նկատմամբ բռնությունը վերածվել է գլոբալ համաճարակի: Բռնության օբյեկտ են դառնում թե՛ 15-19 տարեկան դեռատի աղջիկները և թե՛ 65-ն անց տարեց կանայք: Բռնության կանխման բանալին տեղեկատվությունն ու հրապարակայնությունն է, քանի որ շատ երկրներում այս խնդրի քննարկման վրա տաբու է դրված. այս երևույթի մասին չեն խոսում և չեն մշակում դրա դեմ պայքարի քաղաքականություն:

«Ի՞նչ է տվել ինձ լիդերության դպրոցը»

Դպրոցը 2005-ին ավարտեցի, մինչ այդ շատ ակտիվ էի, շատ բուռն էի, ինձ համար իմ կարծիքն էր շատ կարևոր, հետո հասկացա, որ, չէ, չպիտի այդպես լինի, պիտի լսել, և պարտադիր չէ, որ եթե դու ես ասում, ուրեմն ճիշտ ես, պիտի ուրիշի ճիշտն էլ լսել: Այս հանդուրժողականությունն ինձ շատ մեծ բան տվեց հետագա գործունեության ընթացքում՝ սովորեցի լսել ու ընդունել մարդկանց կարծիքը: Ինչ անենք, որ զրուցակիցդ ուրիշ կուսակցությունից է ու իր առաջնորդին է պաշտպանում: Զգում եմ՝ հիմա իմ մեջ շատ բան է փոխվել: Հիմա շատ ավելի դեմոկրատ ու հանդուրժող եմ դարձել մարդկանց հետ հարաբերություններում:

Լիանա Ղազարյան,
մշակույթի նախարարության աուդիտի բաժնի աշխատակից, ՀՀԿ անդամ

Իմ պարագայում դպրոցն ինձ նոր մոտեցումներ տվեց և՛ որպես անձի, և՛ որպես մասնագետի, առաջ ընթանալու, մասնագիտական որակավորումս բարձրացնելու ցանկություն առաջացրեց, սովորեցի նաև գենդերային «ակնոցով» նայել իրականությանը և օրենքներին:

Մարուշ Ղահրամանյան,
ասոցիացիայի անդամ, էջմիածնի քաղաքապետարանի իրավաբան

Իմ կարծիքով՝ լիդեր ծնվում են, բայց միջավայրը պետք է նպաստի, աջակցի այդ հատկանիշներն ի հայտ գալուն, և ես դպրոցում զգացի այդ աջակցությունը: Սովորեցի սեփական ուժերը ճիշտ գնահատել, ձեռք բերեցի նոր գիտելիքների այնպիսի պաշար, որը կարող եմ կիրառել իմ աշխատանքի մեջ, նոր ծանոթություններ և կապեր հաստատեցի…

Ռաիսա Գրիգորյան,
լրագրող, «Օլիմպիկա» մարզական ամսագրի խմբագիր, ԲՀԿ-ի Էրեբունու խորհրդի անդամ

Կանայք երբեմն ավելի շատ բան են անում, քան տղամարդիկ, սակայն մենք լռում ենք, միայն լսում ենք, մեզ ինքնավստահությունն է պակասում… Դպրոցում հասկացա, որ պետք է նաև ներկայացնել, ասել, խոսել, համարձակ լինել: Մինչև դասընթացը խուսափում էի քաղաքական ոլորտի հետ համագործակցելուց, իսկ այժմ կարծում եմ, որ որպես հասարակական, գործիչ և, ընդհանրապես, որպես ակտիվ քաղաքացի պետք է համագործակցեմ նաև քաղաքական կազմակերպությունների հետ: Իմ մեջ մի հզոր ալիք է ձևավորվել, որը գնալով ավելի է ուժգնանում, և հավատում եմ, որ այն, միանալով դասընթացի յուրաքանչյուր մասնակցի, հետագայում կվերածվի էլ ավելի հզոր ուժի:

Նարինե Խաչատրյան,
Վանաձոր, «Ոսկե միջին» հասարակական նախաձեռնություն» ՀԿ փոխնախագահ, Լոռու մարզային ցանցի կրթության ոլորտի պատասխանատու, հասարակագիտության ուսուցչուհի

Ես սովորել եմ ավելի ազատ խոսել, արտահայտվել, ինչու ոչ՝ վիճաբանել, մի խոսքով, ձերբազատվել եմ ամոթխածությունից: Կարծում եմ՝ լիդերության այս դպրոցը պետք է ինչքան հնարավոր է շատ կանանց վերապատրաստի, որ նրանք կարողանան իրենց լիարժեք քաղաքացիներ զգալ և հարկ եղած դեպքում պահանջներ դնել կառավարման մարմինների առջև:

Հասմիկ Փափազյան,
մաշկաբանության և սեռավարակների բժշկագիտական կենտրոնի արիկոմի նախագահ, կենսաքիմիկոս

Բացի գիտելիքների լայն շրջանակից, դպրոցն ինձ լուրջ կազմակերպչական հմտություններ է տվել, որոնք այսօր ակտիվորեն կիրառում եմ իմ աշխատանքում: Փորձել եմ նաև Մարալիկի ավագանու ընտրություններում առաջադրվել, ու թեև չի հաջողվել, բայց առանց դպրոցում ստացած հմտությունների հազիվ թե այդ քայլին դիմեի: Կարծում եմ՝ չեմ հաղթել ոչ թե նրա համար, որ ցածր վարկանիշ ունեի, այլ նրա համար, որ չկարողացա պայքարել ընդունված քայլերով ու մեթոդներով…

Ռուզաննա Հարությունյան,
Մարալիկի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն, Մարալիկի տարածաշրջանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ

Գիտելիքն ուժ է

Կանանց լիդերության դպրոց. հաջողության գաղտնիքը

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի՝ 2000 թվականից գործող կանանց լիդերության դպրոցը ավելի քան 1800 շրջանավարտ է տվել: Դպրոցը, ընդհանուր առմամբ, 30-ից ավելի հոսք է ունեցել Երևանում և մարզերում: Վկայականների հանձնմանն ավանդաբար հավաքվում են միասին հին ու նոր շրջանավարտները, դասախոսները և հայտնի քաղաքական գործիչները: Վերջերս կայացավ շրջանավարտների երրորդ հանդիպում-համաժողովը՝ «Գիտելիքներից դեպի քաղաքական լիդերություն. հաջողության գաղտնիքը» խորագրով:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Զեմմա Հասրաթյանի խոսքով՝ լիդերության դպրոցն անցած բոլոր կանայք, ըստ էության, գտել են իրենց հաջողության բանալին՝ աշխատելով հասարակական կազմակերպություններում, կուսակցություններում, պետական կառավարման մարմիններում: «Նրանք այսօր հզոր ռեսուրս են հանդիսանում ցանկացած ոլորտի, այդ թվում՝ քաղաքականության համար: Գուցե նրանք դեռ չեն հասել իրենց քաղաքական կամ մասնագիտական կարիերայի բարձունքներին, բայց բոլորն էլ ունեն դրա համար անհրաժեշտ ներուժն ու համարձակությունը»,- նշեց **Զ.Հասրաթյանը:**

Օրվա գլխավոր հերոսներն էին դպրոցի վերջին երկու հոսքերի շրջանավարտները, ովքեր համաժողովի ընթացքում ստացան իրենց ավարտական վկայականները: Դպրոցի այդ հոսքերը հնարավոր եղավ կազմակերպել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Նիդեռլանդների կառավարության, ինչպես նաև Հայաստանում «Բաց հասարակության հիմնադրամների» աջակցությամբ: Ժողովրդավարության զարգացման հարցերով ԵԱՀԿ երևանյան գրասենյակի պատասխանատու **Օլիվեր Մաքքոյը,** դիմելով հանդիպման մասնակիցներին, նշեց, որ շատ հաճելի է գիտակցել, որ կանանց հզորացմանն ուղղված իրենց աջակցությունը իրական արդյունքներ է տալիս, և այսօր արդեն տեսանելի օրինակներ կան:

- Նոր շրջանավարտներին կուզենայի մաղթել, որ ավարտական վկայականը ստանալուց հետո փորձեն մտածել և հասկանալ՝ ինչպե՞ս կարող են առավելագույնս օգտագործել դպրոցում ստացած գիտելիքները: Ուրախ եմ, որ մենք մեր լուման ենք ունեցել ձեզ աջակցելու հարցում: Նաև կուզենայի ապագայում տեսնել, որ հայաստանյան կուսակցություններն էլ ունենային այնպիսի քաղաքական պլատֆորմ, որը կխթանի և կապահովի կանանց քաղաքական առաջընթացը,- ասաց նա:

Դպրոցի դասախոս, փորձագետ **Լիլիթ Զաքարյանն** էլ նշեց, որ երկար տարիներ լիդերության դպրոցում դասավանդելիս համոզվել է՝ մեր կուսակցություններում կան լավ, խելացի, բանիմաց կադրեր: «Շատ դեպքերում այդ կանայք տեսանելի չեն, անգամ իրենց կուսակցությունների ղեկավարների համար, և, կարծում եմ՝ մեր առաջիկա խնդիրները պետք է լինեն, որ մեր լրագրող ընկերները, ովքեր տարիներ շարունակ աշխատում են գենդերային լրագրության դաշտում, նույնպես օգնեն, որ տեսանելի դարձնենք բոլորի համար այն կանանց, որոնք իրոք ուշադրության են արժանի»:

Մի ուշագրավ դիտարկում լիդերության դպրոցի շրջանավարտների այս հավաքից. մեզ հետ զրույցներում նրանք չափազանց ոգևորված էին, ընդ որում՝ բոլորը, անկախ տարիքից, աշխատանքային փորձից ու զբաղեցրած պաշտոնից: Բոլորն էլ նշում էին, որ դպրոցը նրանց ոչ միայն որոշակի գիտելիքներ, այլև ինքնավստահություն ու համարձակություն է տվել, նոր որակներ հաղորդել, որոնք մինչ այդ, չգիտես ինչու, թաքնված են եղել…

Փորձագետի կարծիք

Իսկ ինչու՞ ամուսինը պետք է դեմ լինի…

Կին քաղաքական գործիչները ավելի շատ են բախվում հասարակության մերժողական կամ թերահավատ վերաբերմունքին, հասարակությունը նրանց նկատմամբ ավելի խստապահանջ է, նրանց սխալները ավելի ակտիվ ու խիստ են քննադատվում, նրանց անձնական կյանքը ավելի խորն է զննվում, - ասում է երիտասարդ սոցիոլոգ Գայանե Ղազարյանը, հիմնվելով «Կանանց կողմից քաղաքական իրավունքների իրացման հիմնախնդիրները ՀՀ-ում» ուսումնասիրության արդյունքների վրա, որն անցկացվել է «Շահխաթուն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Նշենք, որ Գայանե Ղազարյանը մասնակցել է Երևանի ավագանու ընտրություններին ՀԱԿ-ի համամասնական ցուցակով:

Զրուցելով քաղաքական ասպարեզ մուտք գործած կանանց հետ՝ սոցիոլոգը հանգել է այն եզրակացության, որ, ընդհանուր առմամբ, հարցվածների համար նորմալ է, երբ ամուսինը դեմ է, ավելին՝ նա պետք է դեմ լինի, այսինքն՝ նա ունի այդ իրավունքը: Դիրք զբաղեցնող բոլոր կանայք այդ պաշտոնին են, որովհետև ամուսինը «ըմբռնումով է մոտեցել», «չի խոչընդոտել», «թույլ է տվել»: Ամուսնացած կանայք հիմնականում շնորհակալություն են հայտնել իրենց ամուսիններին աջակցության համար: Իսկ ամուսնալուծված կանանց դեպքում ի հայտ է եկել այն հանգամանքը, որ ամուսինը դեմ է եղել կնոջ նման ընտրությանը, բայց կինը կամք է դրսևորել: Ինչ վերաբերում է այն կանանց, որոնք կարիերան սկսել են հայրական ընտանիքում, ապա այս դեպքում հիմնական դեմ հանդես եկողները մայրերն են եղել, իսկ աջակցություն կանայք ստացել են հայրերից:

«Հասարակությունը մեծ ուշադրություն է դարձնում՝ կին գործիչը իր ընտանեկան պարտականությունները կատարո՞ւմ է, թե՞ չի կատարում, կին գործիչների անձնական, ինտիմ կյանքը մշտապես ուշադրության կենտրոնում է: Կին գործիչների աշխատանքային թերացումները ավելի խիստ քննադատության են ենթարկվում, իսկ սայթաքումները միշտ ընդհանրացվում են, ասում են՝ կինը չի կարող լինել պատգամավոր, գյուղապետ, նախագահ…

Մինչդեռ եթե տղամարդուն քննադատում են ու ասում, որ այսինչ-այսինչյանը շատ վատն է, որևէ մեկի մտքով անգամ չի անցնում հայտարարել, որ տղամարդը որպես այդպիսին չի կարող լինել նախագահ, պատգամավոր կամ գյուղապետ», – նկատում է Գ. Ղազարյանը:

Նրա խոսքով՝ ընդհանուր առմամբ, կին գործիչներին գնահատելու դեպքում հասարակությունը առաջնորդվում է սեռային հատկանիշով, իսկ տղամարդկանց դեպքում գնահատվում է անձը: Այստեղից էլ կանայք հաճախ գերպատասխանատվություն են զգում իրենց գործունեությունը գերազանց իրականացնելու առումով, քանի որ նրանք էլ են մտածում, որ իրենց անհաջողությունը կարող է «խայտառակել» ամբողջ սեռը և հիմնավորել առանց այն էլ գոյություն ունեցող կարծրատիպերը:

Սոցիոլոգը նաև նշեց, որ ակտիվ գործունեություն ծավալող կանանց գնահատում են կանացիության պրիզմայով՝ կանացի՞ է, թե՞ կանացիությունը կորցրել է: Եվ եթե կինը կանացիությունը պահպանել է, ապա նրա գործունեության հանդեպ հանդուրժողականությունը մեծ է:

Ինչպե՞ս փոխել իրավիճակը: Սոցիոլոգի համոզմամբ՝ կանանց ակտիվության նախադեպերը թուլացնում են կարծրատիպերը, այդ իսկ պատճառով հարկավոր է աշխատել հաջողված պատմությունների վրա, նաև անհրաժեշտ է ԶԼՄ-ների դիրքորոշումը փոխել կին քաղաքական գործիչների հանդեպ, չէր խանգարի բարձրացնել կանանց համերաշխության մակարդակը…

Դիրքորոշում

Կարելի է ասել, որ բանակն ինձ ֆեմինիստ դարձրեց: Ծառայության ընթացքում ավելի ակնհայտ են դառնում կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները. շատ տղաներ իրենց ընկերուհիներին ստրուկի պես են վերաբերվում, պարզապես չեմ հասկանում՝ ինչո՛ւ են ուզում, որ իրենց կողքի աղջիկը ոչ թե լիարժեք մարդ լինի, այլ ստրուկ: Այս ամենը էլ ավելի մղեց ինձ հանդես գալու կանանց և տղամարդկանց հավասարության դիրքերից: Շատ եմ զրուցել այս խնդրի շուրջ ինձ հետ ծառայող տղաների հետ, փորձել բացատրել իմ գաղափարները: Հետաքրքրական է, որ երբ ազատության մասին էի խոսում, շատերը դա նույնացնում էին պոռնկության հետ, այլ ազգերի աղջիկների օրինակն էին բերում, բայց իմ ասած ազատությունը որևէ ազգի կամ անբարոյականության հետ կապ չունի:

Էդուարդ Ղազարյան,
20 տարեկան

Կանայք, ում չեն խանգարում կարծրատիպերը

«Ապագայում ցանկություն ունեմ ԱԺ պատգամավոր դառնալու»

- Մի օր կատակով ասացի, թե ավագանու ընտրություններում թեկնածությունս եմ դնելու: Եղբայրս ասաց, որ չեն ընտրի մի պատճառով՝ քանի գյուղում եմ ապրում և երիտասարդ աղջիկ եմ,- ժպիտով պատմում է Մարգահովտի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Արփինե Մատինյանը, ով, ինչպես ինքն է խոստովանում՝ հակառակն ապացուցելու համար առաջադրում է իր թեկածությունը և անցնում:

- Երկու տեղամասերում էլ շատ բարձր ցուցանիշներ ունեի, որն ինձ համար մեծ անակնկալ էր, չէի սպասում, պարզապես ուզում էի ապացուցել, որ կին լինելը չի խանգարում ավագանու անդամ դառնալուն:

Արփինե Մատինյանը ևս 3 անգամ ավագանու անդամ է ընտրվել: Հաջողության գրավականը, ըստ Արփինեի, նախկինում կատարված աշխատանքն էր.

- Ես դպրոցում եմ աշխատում, ու տարբեր միջոցառումներ ենք անցկացրել, այսինքն՝ ինձ ճանաչում էին համայնքում: Այն, թե հասարակական կարծիքը կարևոր չէ, իրականում այդպես չէ, ուղղակի առաջ գնալու համար պետք չէ ագրեսիվ կերպով ընդվզել, կարելի է կոմպրոմիսի գնալ, սա է իմ մոտեցումը: Երբ մարդիկ զգում են, որ դու քեզնից արժեք ես ներկայացնում, քեզ սկսում են խրախուսել: Իսկ երբ արդեն ընտրվեցի, հասկացա, որ իմ մասնագիտական հմտությունները ինձ չեն բավարարում... Հարգում են գիտելիքներ ունեցողին, ու եթե ցանկանում ես տպավորություն գործել, ուրեմն պետք է անընդհատ աշխատես քեզ վրա...

Արփինեն ավարտել է ԵՊՀ կառավարման ակադեմիան, մասնակցել նաև տարբեր սեմինարների, այժմ էլ ՀԵԿԱ-ի կանանց առաջնորդության ակադեմիայի մասնակիցներից է: Ասում է՝ այն իր համար խթան կհանդիսանա նոր ծրագրեր իրականացնելու համար:

Թեպետ այս անգամ չի առաջադրվել ավագանու ընտրություններում, բայց չի պատրաստվում քաղաքականության ասպարեզը լքել.

- Ապագայում ցանկություն ունեմ նաև ԱԺ պատգամավոր դառնալու, հուսամ՝ կհաջողվի:

Արփինեն համոզված է. եթե կարողանում ես գործդ լավ անել, կայացած ես որոշակի ոլորտում, ապա սեռը, տարիքը՝ ոչինչ կապ չունի, վստահությունն էլ աստիճանաբար հասարակության կողմից առաջանում է...

«Գուցե պատճառը իմ համառ բնավորությունն է»...

Ջավահիր Եղիազարյանն Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքից է: Լրագրող է, զբաղվում է հասարակական աշխատանքով, «Արմավիրի ընտանիքի աջակցման կենտրոն» ՀԿ հիմնադիրն է, իսկ ահա վերջերս նաև Ջանֆիդա համայնքի ավագանու անդամ է ընտրվել:

Ջավահիրը խոստովանում է, որ այս ճանապարհը հեշտ չի տրվել իրեն, գենդերային կարծրատիպերի ազդեցությունը զգացել է իր մաշկի վրա.

- ... Ծնողներս, եղբայրս շատ դեմ էին, ասում էին՝ լրագրողը աղջկան հարմար մասնագիտություն չէ, դու չես ամուսնանա, լրագրողները չեն ամուսնանում,- ժպիտով պատմում է Ջավահիրը, ով սակայն իր համառության շնորհիվ աշխատանքի է անցնում Արմավիրի հեռուստաընկերությունում, հետո նաև աշխատում է լրատվական կայքում, այլ հեռուստաընկերություններում:

- Կարծես իմ աշխատանքով ես ամեն օր ապացուցում եմ, որ իմ ընտրած ճանապարհում չեմ սխալվել: Գուցե պատճառը նաև իմ համառ բնավորությունն է. ես նախընտրում եմ գնալ առաջ, գուցեև սխալվել, բայց չվախենալ՝ գնալ այդ ճանապարհով:

Իսկ ահա այս տարի Ջավահիրին արդեն հարազատները խորհուրդ են տալիս ավագանու ընտրություններում իր թեկնածությունն առաջադրել.

- Անկուսակցական եմ, բայց վերջին տարիներին «Օրինաց երկիր» կուսակցության թերթի մարզային թղթակիցն էի, այդպես մտա քաղաքականության մեջ ու նաև իմ թեկնածությունն առաջադրեցի: 105 ձայն էի ստացել՝ 18 տղամարդ թեկնածուների միջից: Ինձ համար իրոք անակնկալ էր,- խոստովանում է Ջավահիրը, ով հաղթանակի մեծ բաժինը վերագրում է իր հասարակական ակտիվությանը.

- Հիմա շատ դեպքեր են լինում, երբ մեր համայնքի կանայք գյուղապետարանի փոխարեն մեր տուն են գալիս: Ասում են՝ գյուղապետը տղամարդ է, մենք ամաչում ենք...

Ջավահիրը համոզված է, որ իր ձեռքբերումների հիմքում այն սեմինարներն ու դասընթացներն են, որոնց ինքը մասնակցել է.

- Երբ ՀԵԿԱ-ն սկսեց սեմինարներ անցկացնել Արմավիրում, ես ՀԿ-ներից մեկում մամուլի պատասխանատուն էի: Ամեն նման հանդիպումից հետո, կարծես, նոր համարձակություն ու ոգևորություն էի ձեռք բերում: Ահա այդպես ծնվեց նաև իմ կազմակերպությունը ստեղծելու գաղափարը: Հիմա էլ մասնակցում եմ ՀԵԿԱ-ի «Կանանց առաջնորդության ակադեմիա-2013» ծրագրին ու արդեն ունեմ նոր մտահղացումներ, որոնք անպայման կիրագործեմ ծրագրի ավարտից հետո:

«Սկզբում ինձ լուրջ չընդունեցին»

Գայանե Խաչատրյանը մեկն է այն երիտասարդ կանանցից, ում կյանքն իրոք փոխվել է հասարակական կազմակերպությունների հետ շփումից հետո: Այժմ նա էլ է ակտիվ գործում հասարակական ոլորտում, ղեկավարում է «Թալինի կանանց ռեսուրս կենտրոնի» զարգացման հիմնադրամը:

- Արդեն 2 տարի է, ինչ ՀԵԿԱ-ի ձեռներեց կանանց ցանցի անդամ եմ ու միշտ մասնակցում եմ բոլոր սեմինարներին, ծրագրերին: Այն ինձ համագործակցության նոր հնարավորություններ տվեց տարբեր մարզերի, Երևանի հետ, նաև օգնեց մասնագիտական հմտությունների զարգացման գործում՝ մենեջմենթ, աշխատանքի ճիշտ կառավարում:

Գայանեն գոհունակությամբ է նշում, որ այդ սեմինարներից ստացած գիտելիքների շնորհիվ անցյալ տարի հաջողությամբ երկու ծրագիր է կազմել և ստացել ֆինանսավորում, իսկ այժմ ԱՄՆ դեսպանատան փոխանակման ծրագրով մեկնում է արտերկիր վերապատրաստվելու:

Այս տարիների ընթացքում Գայանեն խոստովանում է, որ ամեն բան չէ, որ հեշտ է տրվել, խտրական մոտեցման է հանդիպել հենց սկզբից:

- Ծրագիրս իրականացնելու համար պետք է հանդիպեի համայնքապետի հետ, իսկ ինձ լուրջ չընդունեցին: Կարդում էին անուն-ազգանունս, երիտասարդ աղջիկ, թերահավատություն կար: Սակայն այժմ վերաբերմունքն այլ է. իրենք են ասում՝ նոր ծրագրեր բեր մեր համայնք: Այսինքն՝ կարծիքը փոխվում է, մենք էլ պետք է կարողանանք մեր մեջ ուժ գտնել, ճիշտ ներկայանալ: Կին կա, որ տղամարդ ղեկավարի մոտ, հատկապես, երբ վերջինը ձայնը մի փոքր բարձրացնում է, անմիջապես լռում է՝ մտածելով՝ տղամարդ է, ճիշտ է, կամ էլ անհարմար է: Մինչդեռ մեր պահվածքով, վարվելաձևով պետք է ցույց տանք, որ մեր կարծիքն էլ կշիռ ունի:

«Ես հավասարակշռության կողմնակից եմ թե՛ ընտանիքում, թե՛ քաղաքականության մեջ»...

«Ես հավասարակշռված հարաբերությունների կողմնակից եմ թե՛ ընտանիքում, թե՛ քաղաքականության մեջ. կինն ու տղամարդն պետք է իրենց դերում լինեն, և կինը պետք է հնարավորություն ունենա իր ներուժն օգտագործելու: Հատկապես հայ կինը շատ մեծ ներուժ ունի. ուղղակի ափսոս է այն վատնել միայն նրա համար, որ կնոջը թույլ չեն տալիս ինքնադրսևորվել...» - ասում է «Ես Yes!» ամսագրի գլխավոր խմբագիր Անի Քոչարը, ով այս տարի Երևանի ավագանու ընտրություններում առաջադրվել էր «Բարև, Երևան» դաշինքի ցուցակով:

- Վստահ եմ, որ կգա այն օրը, երբ կգտնվեն կուսակցություններ, որոնք առաջին հորիզոնականներում հենց կնոջ անունը կդնեն և կնոջը կտեսնեն ամենաբարձր ղեկավար պաշտոնում: Թեև մի ցավալի բան էլ կա. որքան շփվում եմ մարդկանց հետ, զրուցում ժողովրդի հետ, տեսնում եմ, որ մեր հասարակությունն էլ պատրաստ չէ նույն քաղաքապետի, վարչապետի կամ նախագահի պաշտոնում կին տեսնելու: Կնոջը տեսնում են մանկապարտեզի վարիչի կամ դպրոցի տնօրենի պաշտոնում, բայց ոչ քաղաքական լուրջ և պատասխանատու դիրքերում: Դրա պատճառը, կարծում եմ, մեր հոգեկերտվածքն է, մեր մենթալիտետը, որովհետև դարեր շարունակ կանանց կառավարման տիրույթը միայն իրենց ընտանիքն էր, օջախ կոչվածը, խոհանոցը, և կնոջն այլ դերում չէին տեսնում: Ցավոք, այսօր էլ մեր հասարակության մեջ կան մարդիկ, ովքեր կնոջը դժվարությամբ են պատկերացնում տնից դուրս՝ հասարակական գործընթացներում: Անգամ կան տղամարդիկ, որոնք կնոջ կողմից ավտոմեքենա վարելն էլ ոչ միանշանակ են ընդունում: Իրենք կնոջը պատկերացնում են «թագուհի» միայն տանը, և հենց սա է կանխորոշում մեր երկրի ներկայացուցչական պատկերը. մեր երկիրը կնոջ դեմք չունի, այն ամբողջովին տղամարդու դեմքով է ներկայանում աշխարհին: Ես ֆեմինիստական ծայրահեղ գաղափարների մասին չէ, որ խոսում եմ, այլ ամենաբնական հավասարակշռության մասին, որովհետև մի սեռը չի կարող ամբողջական և վերջնական որոշումներ կայացնել: Կինը մի կերպ է մտածում, տղամարդը՝ այլ կերպ, և երկու սեռերի կարծիքներն էլ պետք է ներկայացված լինեն:

Նորարարություն

Հնարավորությունների նոր հարթակ նախաձեռնող կանանց համար

Այս տարի սկիզբ դրվեց կանանց առաջնորդությանը նպաստող ևս մեկ հարթակ՝ «Կանանց առաջնորդության ակադեմիա-2013» ծրագիրը: Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) և Հայաստանում ԱՄՆ Խաղաղության կորպուսի Գենդերային հավասարության և կանանց հզորացման նախաձեռնության (GenEq) համատեղ այս նախագծի նպատակն է հզորացնել և ոգեշնչել մասնակիցներին՝ դառնալու ավելի ակտիվ իրենց համայնքում և աշխատավայրում, կառուցելու մարզային մասնագիտական ցանցեր, մշակելու նորարարական ծրագրեր:

Առաջնորդություն, թիմային աշխատանք, ցանցային համագործակցություն, ժամանակի և ռեսուրսների կառավարում, մոտիվացիա... սրանք են այն շեշտադրումները, որոնք կարևորել են կազմակերպիչները՝ փորձելով համախմբել տարբեր ոլորտներում գործող ակտիվ կանանց ու երիտասարդ աղջիկների ու հնարավորություն ընձեռել նրանց իրագործելու համատեղ մշակված նախաձեռնություններ: Ծրագրի մասնակից են դարձել 50 կանայք Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից: Այն բաղկացած է 3 փուլից:

- Հունիսին Ծաղկաձորում անցկացված հավաքը առաջին փուլն էր, որի ընթացքում մասնակիցները գիտելիքներ ու հմտություններ ստացան: Ունեինք նաև հրավիրյալ հյուրեր, ովքեր կիսվում էին իրենց հաջողված փորձով մասնակիցների հետ, հանդես գալիս դասախոսություններով: Երկրորդ փուլում կձևավորվեն աշխատանքային խմբեր, որոնք 4-5 ամիսների ընթացքում առնվազն մեկ ծրագիր պետք է ներկայացնեն, դա կարող է լինել և՛ սոցիալական համայնքային ծրագիր, և՛ փոքրիկ բիզնես նախաձեռնություն,- պատմեց մեզ հետ զրույցում ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Նարինե Թադևոսյանը «Հայաստանի մանուկներ» մասնագիտական կողմնորոշման հիմնադրամի ղեկավարն է: Այս ծրագրում հանդես է գալիս որպես մենթոր, բանախոս.

- Շատ հետաքրքիր խումբ է ձևավորված. մի մասը հասարակական ոլորտում գործող կանայք են, մյուս մասը՝ բիզնես ոլորտի ներկայացուցիչներ, ունենք նաև ուսանողներ: Շատ կարևոր է, որ այս երեք կողմերը համագործակցության առումով հնարավորություն ունեն լինելու մեկ դաշտում: Կարծում եմ՝ նույն տրամաբանությամբ էլ կբաշխվեն նաև խմբերը, կունենանք երիտասարդության, բիզնես ոլորտի, հասարակական դաշտին վերաբերող ծրագրեր:

Մարիամ Պողոսյանն էլ ակադեմիայի այս ծրագրի երիտասարդ մասնակիցներից է, սովորում է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում:

- Նեղ մասնագիտությամբ կառավարիչ եմ, ապագա մենեջեր, ինչի համար կարևոր են լիդերի կարողությունները: Ինձ առաջնորդության ակադեմիան գրավեց հենց այս հմտությունները ստանալու առումով: Նոր ունակություններ, գիտելիքներ, որի շնորհիվ, կարծում եմ, կկարողանամ աշխատաշուկայում ավելի մրցունակ լինել,- նշում է Մարիամը և հավելում, որ իր համար ամենատպավորիչը ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի հետ հանդիպումն էր:

- Ես միշտ մտածել եմ քաղաքական դաշտում գործելու մասին, բայց ոչ մի ոգևորող, մղող փաստ չի եղել, որ կկարողանամ այդ ոլորտ մուտք գործել ու առաջ գնալ, իսկ Զարուհի Փոստանջյանի ոգևորիչ ելույթը ինձ ստիպեց վերանայել իմ կարծիքը:

Կանանց առաջնորդության ակադեմիայի առաջին հյուրերից էր նաև Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը, ով կարևորեց հասարակական կազմակերպությունների դերը երկրում առկա խնդիրների լուծման գործում և քաջալերեց մասնակիցներին՝ համառություն ու համարձակություն հանդես բերել իրենց նախաձեռնությունները կյանքի կոչելու հարցում:

Երիտասարդական խորհրդարան

«Ուղղակի նրանց համարձակությունն է պակասում»...

Հայաստանի երիտասարդական խորհրդարանում, ինչպես ՀՀ ԱԺ-ում, տղամարդիկ իրենց ներկայությամբ գերազանցում են կանանց: Սակայն երիտխորհրդարանականները շատ ավելի մոտ են հավասարությանը, քան ավագ սերնդի ներկայացուցիչները: Երիտխորհրդարանի կազմում աղջիկները 32 տոկոս են կազմում, թեպետ 12 հանձնաժողովներից միայն մեկն է աղջիկ ղեկավարում:
Մենք զրուցում ենք երիտասարդ պատգամավորների հետ վերջերս ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի իրագործման շուրջ: Ի՞նչ լուծումներ են նրանք տեսնում սեռերի միջև լիարժեք հավասարության հաստատման ճանապարհին:

Երիտխորհրդարանի ՀՀԿ խմբակցության ղեկավար **Սևակ Խաչատրյանը** կարծում է, որ ընդհանուր առմամբ կանայք Հայաստանում իրենց ներուժն օգտագործելու բոլոր հնարավորություններն ունեն, և այս առումով կարծես թե որևէ խոչընդոտ չկա: «Սակայն ես չեմ կարող երաշխիքներ տալ, որ որևէ քաղաքում կամ գյուղում որևէ տղամարդ իր կնոջը չի արգելի քաղաքականությամբ զբաղվել»,- ասում է Սևակը:

Լիարժեք գենդերային հավասարության հասնելու համար, նրա խոսքով, անհրաժեշտ է ենթագիտակցության վրա ազդել, պետք է մեր հասարակության մենթալիտետում կատարվեն համապատասխան փոփոխություններ, որպեսզի յուրաքանչյուր անհատ պատկերացնի ու հասկանա հավասարության կարևորությունը: Մեկ օրենքով կամ մեկ հրամանով անհնար է հասարակական մտածողության մեջ այդպիսի առանցքային փոփոխություններ կատարել, պետք են միջոցառումների համալիր և, որ ամենակարևորն է՝ ժամանակ: Օրենքն էլ այս դեպքում անձրևանոցի դեր կարող է կատարել՝ պաշտպանելով և սատարելով խնդրի լուծմանն ու իրագործմանը»:

«Այսօր Հայաստանում կանանց ներգրավվածությունը քաղաքականության մեջ շատ փոքր տոկոս է կազմում: Ճիշտ է, եթե համեմատենք նախորդ գումարման ԱԺ-ի հետ, ապա աճ միանշանակ կարող ենք արձանագրել, սակայն մասնագիտական հզոր ներուժ ունեցող և քաղաքականապես հասուն շատ կանայք այսօր չեն մասնակցում քաղաքական որոշումների կայացմանը»,- համոզված է երիտխորհրդարանի «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ **Լուսինե Օրդոյանը:** Միևնույն ժամանակ նա կարծում է, որ այսօր կանայք ստանում են մրցունակ կրթություն, և, կարծես թե կոտրվում է ձևավորված այն կարծրատիպը, որ կանայք չեն կարող քաղաքականությամբ զբաղվել, և կնոջ դերը միայն խոհանոցում է: Ինչ վերաբերում է օրենքին, ապա Լուսինեն թեպետ ուրախ է, որ կառավարությունը հետաքրքրված է գենդերային հավասարության խնդրով, բայց և կարծում է, որ հավասար իրավունքները և հավասար հնարավորություններն արդեն իսկ ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, այսինքն՝ խնդիրը ոչ թե օրենքների ընդունման մեջ է, այլ դրանց լիարժեք իրագործման:

Երիտասարդական խորհրդարանի ԲՀԿ խմբակցության ղեկավար **Նարեկ Վանեսյանի** կարծիքով՝ վերջին տարիներին կանայք քաղաքականության մեջ ակտիվացել են: «Ես կարծում եմ, որ Հայաստանում կանայք ունեն իրենց ներուժն օգտագործելու հնարավորությունները, ուղղակի կա՛մ համարձակության պակաս կա, կա՛մ տանն ամուսնու հետ փոխհամաձայնության գալու դիվանագիտության պակաս: Համարձակություն է պետք քաղաքականությամբ զբաղվելու համար: Ուղղակի պետք է վերացնել արհեստական անջրպետը, աջակցել կանանց քաղաքականության մեջ ինքնադրսևորվելու հարցում: Կարծում եմ՝ այս հարցը ոչ այնքան օրենսդրական լուծումներ է պահանջում, որքան ուղղակի պետք է կամք դրսևորել կանանց ներգրավելու տարբեր գործընթացների մեջ»:

Երիտխորհրդարանի ՕԵԿ-ական ներկայացուցիչ **Վիկտորյա Ճատուրյանը** համարում է, որ կանանց համար իրավական առումով սահմանափակումներ չկան, սակայն կան հասարակության մեջ ձևավորված կարծրատիպեր, որոնց հաղթահարման համար ժամանակ է պետք: «Որպես երիտասարդական խորհրդարանի անդամ կարող եմ նպաստել գենդերային հավասարության հաստատմանը՝ օգտվելով ինձ ընձեռված հնարավորություններից՝ բարձրաձայնելով այդ խնդիրը, պաշտպանելով հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների գաղափարը, տարածելով ու քարոզելով այն»:

Ֆեմինիզմն ինչպես որ կա

«Ծաղիկները հաճելի են, բայց մենք նախընտրում ենք հեղափոխությունը...»

Այն, որ հայ հասարակության պատկերացման մեջ «ֆեմինիզմ» բառը բացասական երանգ ունի և վախ է առաջացնում նույնիսկ կայացած ու հաջողության հասած կանանց շրջանում, մի իրողություն է, որի հետ շատերն են հաշտվում, նույնիսկ որոշ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներ: Երիտասարդ աղջիկների մի խումբ փորձեց հակառակվել այդ կարծրատիպին՝ այս տարվա մարտի 8-ին հանդես գալով առնվազն երկու նախաձեռնությամբ, որոնց անվանման մեջ շեշտադրվում էր «ֆեմինիզմ» բառը: Դա հեծանվարշավն էր ֆեմինիստական կոչերով և Ազատության հրապարակում ընթերցված «Հեղափոխություն Յարս» ֆեմ-մանիֆեստը, որով Հայաստանում ծնված, հայաստանյան հասարակության մեջ ապրող երիտասարդ աղջիկները պատրաստակամություն են հայտնում ընդամենը պաշտպանել իրենց իրավունքները...

Մանիֆեստի տեքստում, մասնավորապես, ասված է.

«Աղջիկ ծնվելը մեր առաջին հաղթանակն է: Մենք չունենք այլ ընտրություն, քան պայքարելը, որպեսզի ծնվելուց հետո էլ աբորտ չանեն մեզ՝ մեր ձայնը, մեր մարմինը, մեր մտքերը, մեր կարողությունները, ցանկությունները, պատկերացումները, գործողությունները: Որպեսզի կարողանանք ինքնիրացվել, զարգանալ, կայանալ որպես լիարժեք անհատներ:

Մերժում եմ այն համակարգը, որի մեջ ինձ դաստիարակում են և վերաբերվում են որպես ենթարկվող-հնազանդ, տեսակետ չունեցող, անինքնավստահ, հարմարվող, կցորդ:

Գիտակցում եմ, որ ապրում եմ պատրիարխալ, սահմանափակող համակարգում, որտեղ ստորադասը ես եմ, որտեղ ես օբյեկտ եմ, ոչ թե սուբյեկտ: Վստահ եմ, որ եթե ինքս չազատագրվեմ, ոչ ոք իմ փոխարեն դա չի անի:

Ուզում եմ իմանալ իմ տեսակի պատմությունը: Ուզում եմ ինձ չասեն՝ գնամ կոֆե դնեմ: Ուզում եմ մարմինս իմը լինի, բռնության չենթարկվեմ, իմանամ ինքնապաշտպանվել: Ուզում եմ աշխատել և այն մասնագիտությամբ, որն ինքս կընտրեմ՝ նաև հոգևորական, զինվորական, վարորդ, վարչապետ:

Բարձրաձայնում եմ, որ ազատ եմ՝ խոսել թե չխոսել և ինչպես արտահայտվել, մասնակցել թե չմասնակցել, ընդդիմանալ թե համաձայնվել: Անընդհատ բախվում եմ՝ «կնիկ ա՝ հիմար ա, հիստերիկ ա, բան չի հասկանում, կինը ո՞ւր՝ քաղաքականությունն ուր» կարծրատիպերի հետ:

Ընտրում եմ՝ ինչպիսին լինել՝ տարբե՞ր, թե՞ մեծամասնության նման, ընդունված մոդելից դո՞ւրս, թե՞ ներս, կո՞ւյս լինել, թե՞ չլինել, ամուսնանա՞լ, թե՞ չամուսնանալ, երեխա ունենա՞լ, թե՞ չունենալ, ամուսնանալո՞վ երեխա ունենալ, թե՞ առանց ամուսնանալու: Ընտրում եմ իմ կարգավիճակը, իմ ապրելաձևը, իմ շարժուձևը, հագուկապը, մասնագիտությունը, աշխատանքը, իմ սոցիալական ցանցը: Ընտրում եմ համարձակ լինելը:

Որոշում եմ քննադատել, փոխել, կոտրել, ապրել, պարել, ստեղծել, սիրել:

Առաջարկում եմ առաջարկել բոլոր չառաջարկված առաջարկները:

Ինձ սահմանափակելն անհնար է, ես դուրս եմ եկել սահմաններից, ես չափս անցել եմ, ու ինձ բռնել էլ չի լինի»:

(կրճատումներով)

Կողմ եւ դեմ

Հայ կանայք բանակում

Հայաստանի պաշտպանության նախարարությունը 2013-2014 թթ. ուսումնական տարում հայտարարեց իգական սեռի ներկայացուցիչների ընդունելություն ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում: Սա նաև կարող է նախադրյալներ ստեղծել, որ հետագայում աղջիկները ևս բանակ զորակոչվեն: Որքանո՞վ է մեր բանակը պատրաստ իր շարքերն ընդունելու կանանց և աղջիկներին, ի՞նչ խնդիրներ կարող է առաջացնել նրանց զանգվածային մուտքը զինված ուժեր, և ի՞նչ դրական արդյունքներ կտա: Այս հարցերի շուրջ զրուցեցինք ծառայած և վերջերս զորացրված զինծառայողների հետ:

Ներսես Կարապետյան. «Ես կողմ եմ կանանց ներգրավվածությանը, կարծում եմ՝ նրանց համար էլ շատ օգտակար կլինի բանակում ծառայել: Եթե մենք հավասարություն ենք ուզում, թող հավասար լինենք նաև հայրենիքի նկատմամբ մեր պարտքով»:

Միհր Դավթյան. «Մեր բանակը դեռ չի հասել այն մակարդակի, որ ապահովի նորմալ հայ կնոջ համար քաղաքակիրթ միջավայր: Բանակում հայհոյանքը շատ է, գողական վարքը շատ է: Ես ծայրամասային զորամասում եմ ծառայել, որտեղ աշխատող կանանց լավ աչքով չէին նայում: Մինչև էս կարծրատիպը չկոտրվի, նորմալ կանայք չեն ցանկանա գալ բանակ»:

Սարգիս Ղարիբյան. «Լավ կլիներ, եթե կին սպաներ շատ ունենայինք, բայց, իմ կարծիքով, դա դեռևս հնարավոր չէ: Եթե այսօրվա հայ տղամարդը կնոջը չի հարգում, նրա իրավունքները ոտնահարում է, ամեն օր բռնության է ենթարկում, ո՞նց է այդ նույն հայ տղամարդը կատարելու կնոջ հրամանը»:

Դավիթ Անտոնյան. «Ինչի՞ մեզ ի՞նչ է եղել, որ աղջիկները ծառայեն: Բա ամոթ չի՞: Տղերքի հոգեբանությունը կխախտվի դրանից: Թող մեր աղջիկներն ու կանայք հանգիստ լինեն, մենք կապահովենք իրենց անվտանգությունը»:

Արամ Եփրեմյան. «Ես միայն ուրախ կլինեմ, որ աղջիկները գան բանակ, որ կին սպաներ էլ ունենանք: Սահմանային զորամասերում ծառայող երիտասարդ սպաները հիմնականում միայնակ են, նրանք էլ կգտնեն իրենց երկրորդ կեսին, հենց սահմանային գյուղերում էլ ընտանիք կկազմեն ու կամրապնդեն մեր դիրքերը»:

Արսեն Ենոքյան. «Եթե կանանց համար առանձին զորամասեր ստեղծեն ու հատուկ պայմաններ ապահովեն, միայն այդ դեպքում եմ պատկերացնում աղջիկներին բանակում»:

Սոս Դանիելյան. «Կանայք շատ բան կարող են փոխել բանակում, նրանց ներկայությունը միայն բավական կլինի, որ տղամարդիկ իրենց ավելի զուսպ, ավելի քաղաքակիրթ պահեն: Այն միջավայրում, որտեղ միայն տղամարդիկ են, բոլորովին այլ մթնոլորտ է տիրում»:

Համարի վրա աշխատել են՝
Լիլիթ Քոչինյանը,
Արման Ղարիբյանը,
Կարինե Պետրոսյանը,
Մարիաննա Ղահրամանյանը,
Լիա Խոջոյանը



Լույս են տեսել

Վերջերս Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան ներկայացրեց խորհրդարանական ընտրություններում կանանց մասնակցության վերաբերյալ իր հետազոտական աշխատանքի արդյունքները՝անցկացված ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսավորմամբ:

Այս առիթով հրավիրված համաժողովի շրջանակներում տեղի ունեցավ երկու հրատարակությունների շնորհանդեսը: Առաջինը՝ **«Կանանց քաղաքական մասնակցությունը 2012-ի խորհրդարանական ընտրություններին»** վերլուծական տեսությունն էր, որում ամփոփված են թեմային առնչվող հետազոտության արդյունքները: Երկրորդը **«Կանայք քաղաքականության մեջ և քաղաքականության մասին»** ժողովածուն էր, որում տեղ են գտել խորհրդարանական ընտրությունների ընթացքում կին թեկնածուների և ընտրված կանանց հետ անցկացված հարցազրույցները:

Մանրամասները կարդացեք WomenNet.am կայքում:

Թողարկումը հրատարակվել է ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի եւ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համատեղ աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com